

## ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արագածոտն մարզի Թալին համայնքի Արագածավան բնակավայրի Արագածի պեռլիտի հանքավայրի շահագործման թույլտվության համար շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկում 03.06.2025թ

2025թ. Հունիսի 03-ին՝ ժամը 13:00-ին, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի և ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգի տեղի ունեցավ Թալին համայնքի Արագածավան բնակավայրի Արագածի պեռլիտի հանքավայրի շահագործման թույլտվության համար նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկումը (1-ին լսում):

Հանրային քննարկման մասին հայտարարությունը նախապես տեղադրվել է Արագածավանի վարչական տարածքի ֆեյսբուկյան էջում, ինչպես նաև փակցվել է Արագածավանի վարչական տարածքի տարբեր տեղերում, Արագածավանի վարչական շենքի հայտարարությունների համար նախատեսված տախտակին:

### ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ

Ա.Նազարյան Թ.Խաչատրյան	Արագածավան բնակավայրի վարչական ղեկավար, նիստը վարող Թալին համայնքապետարանի ՖՏԵՀՀ բաժնի առաջատար մասնագետ, քարտուղար
Հ.Մարգարյան	Հիդրոէն Գոլդ ՍՊ ընկերության ներկայացուցիչ
Վ.Ավետիսյան	Հիդրոէն Գոլդ ՍՊ ընկերության ներկայացուցիչ

համայնքի ներկայացուցիչներ

Նիստը տեսաձայնագրվում էր:

Բացման խոսքով հանդես եկավ Արագածավան բնակավայրի վարչական ղեկավար Ա.Նազարյանը, ներկայացրեց հարցի էությունը, որ „Հիդրոէն Գոլդ“, ՍՊԸ-ն դիմել է համայնքին Արագածի պեռլիտի հանքավայրի շահագործման թույլտվության համար նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հանրային քննարկում անցկացնելու վերաբերյալ, որից հետո խոսքը փոխանցեց „Հիդրոէն Գոլդ“, ՍՊԸ ներկայացուցիչ Վ.Ավետիսյանին

Նա ներկայացրեց, որ „Հիդրոէն Գոլդ“, ՍՊ ընկերությունը երկար տարիներ շահագործում է Արագածի պեռլիտի հանքավայրի տարածքներից և հիմա ուզում է շարունակել իր գործունեությունը: Նոր հանքավայրի տարածքը կազմում է 5.09 հա, արդյունահանվող պեռլիտի քանակը մոտ 1 մլն 541 հազար խորանարդ մետր, օգտագործվելու է մոտ 20 տարի: Ստեղծվելու են նոր աշխատատեղեր, որտեղ աշխատելու առաջնահերթությունը տրվելու է տեղի բնակիչներին, ՍՊԸ-ն հնարավորություններ կստեղծի իր մասնակցությունն ունենալու

համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը, մասնավորապես Արագածավան բնակավայրին, ինչպես նաև կատարվելու են անվտանգության հետ կապված բոլոր գործողությունները:

Ելույթներ ունեցան նաև համայնքի ներկայացուցիչները, որոնք հավանություն տվեցին „Հիդրեն Գոլդ“, ՄՊԸ-ի ծրագրերին և առաջարկեցին, որ եթե ընկերության գործունեությունը անվտանգության նկատառումներով չի ստեղծելու պրոբլեմներ բնակավայրի համար, բնակիչներին աշխատանքային տեղեր կապահովվեն, ընկերությունը կամավորության սկզբունքով մասնակցություն կունենա համայնքի զարգացմանը, իրենք դեմ չեն լինի հանքավայրի շահագործմանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ**

Տալ համաձայնություն „Հիդրեն Գոլդ“, ՄՊ ընկերությանը Արագածի պեղիտի հանքավայրի շահագործմանը, շրջակա միջավայրի նախարարության փորձաքննությունը անցկացնելու

**Նիստը վարող՝** Արագածավանի վարչական ղեկավար՝  
**Նիստը արձանագրեց՝**

  
**Ա. Նախչանյան**  
**Թ. Խաչատրյան**

“ Հիդրեն Գոլդ, ՄՊԸ ներկայացուցիչ՝

  
**Ա. Նախչանյան**  
